նից, Թրիալեթիից, Ուգերլիկ-Թեփեից[12] և այլ հուշարձաններից, որոնք թվագրվում են միջին բրոնզի վերջին դարերով։

Հաջորդ խմբի կավանոթները սև կամ դարշնագույն մակերեսով, երկթեք իրանով, կլոր կամ երկարավուն կանթով գավաթներ են (աղ. III, նկ. 12—13)։ Այսպիսի գավաթներ հայտնաբերվել են Էլարից, Գառնիից[13] և այլ վայրերից։

Նշելով վերը ներկայացված դամբարանների և նրանցից հայտնաբերված նյութերի համեմատական ուսումնասիրությունից, կարող ենք ասել, որ Շիրակի դաշտի և մասնավորապես Քեթիի միջին բրոնզեդարյան մշակույթը իր բնորոշ կողմերով սերտորեն կապվում է համահայաստանյան՝ մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսով թվագրվող մշակույթի հետ և կազմում է նրա անբաժանելի մասը։

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՍՓԻՒՌ ԾԱՂԿԻՆ»

Մաշտոցի անվան Մատենադարանի ինը ձեռագրերում պահպանվել է մի զրույց համասփյուռ ծաղկի մասին, որ վերնագրված է՝ «Պատմութիւն համասփիւռ ծաղկին», կամ «Վասն ծաղկին»։ Այս զրույցում թվարկված են այդ ծաղկին վերագրված հրաշագործություններ։ Զրույցի մեջ ասված է. «Թէ ի ականջդ հասուցանես՝ զվերնական ձայն և զբարբառ լսես և հասկանաս զամենայն լեզուս մարդկան և իմանաս զձայն անասնոց և գազանաց և թռչնոց. ապա թէ ի աչքդ հասուցանես, զամենայն արարածք առաջի աչացդ տեսանես. իսկ թէ ի քիմքդ հասուցանես, զհոտ անուշ յերկնից առնուս, ապա թէ ի լեզուդ հասուցանես, զամենայն լեզու զբրուցես և բարբառիս, զիմաստութիւն իմաստնոց և զվարդապետութիւն պատմես, ապա թէ ի մատունքդ հասուցանես զամենայն արհեստ (կամ արուեստ) առնես... Եւ բաղում ինչ ասացին վասն ծաղկիս զօրաւոր հրաշս մեծամեծ»[1]։

Այս վերջին արտահայտությունը մեզ թելադրեց այլ աղբյուրներում էլ հիշատակություններ որոնել համասփյուռի հրաշագործությունների մասին։ Մյուս աղբյուրը Մխիթար Գոշի առակներն են։ 26-րդ առակում պատմվում է, թե ինչպես բույսերը թագավոր են ընտրում. «Եւ Եղև ոչ սակաւ հակառակութիւն, զի ոմանք ասէին զշուշան լինել, և այլք զախրիզանն, և բազումք զհամասպրանն (նույնը՝ համասփյուռ— Ս. Ա.)[2] և ամենեցուն հաճոյ թուեցաւ լինել համասպրանն... զի ամենայն տիրիցէ աշխարհի. և մանաւանդ զի մեծամեծ ունելով զօրութիւն բժշկութեան՝ զհիւանդս բժշկիցէ և քաջատես առնիցէ, և ի վերայ ծովու գնալ տացէ, և իմաստութեամբ զտգէտս լցցէ»[3]։ Այստեղ չեն կրկնվում նախորդ զրույցում թվարկված հրաշագործությունները, այլ նորանոր հատկություններ են ավելացվում։

XVII դարի բանաստեղծ Դավիթ Սալաձորցին իր «Գովասանք ծաղկանց» տաղում պատմում է հնագույն մի ավանդություն համասփյուռ ծաղկի մասին։

Արքայիկ օձն թագաւոր, ինքն սպիտակ
որպէս զձիւն,
Համասփիւռին կու հետեվի և զօրութիւն
կառնու հոտոյն[4]։

Արքայիկ օձը՝ օձերի թագավորը, իր զորությունը վերցնում է ծաղիկների թագավորից։ Իսկ արքայիկ օձի զորությունը նրա նայվածքի մեջ է, որն այրում, սպանում է։ Մի ավանդություն կա այն մասին, որ երբ Ալեքսանդր Մակեդոնացին պաշարել էր մի ասիական քաղաք, արքայիկ օձը պարսպի վրա գտնվող անցքից իր հայացքով 300 մարդ է սպանում Ալեքսանդրի զորքից[5]։ Արքայիկ օձի ծնունդը կապվում է քաջահավ կոչվող թռչունի հետ (քաջ, ոգի բառից, իբր հոմանիշ «արտավազդահավ» բառի, որ ծագում է Արտավազդի անունից. իբր

---

12 А. А. Мартиросян, նշվ. աշխ., նկ. 32։ Հ. Հ. Մնացականյան, նշվ. աշխ., աղ. III, նկ. 3—4, 6։ Э. М. Гогадзе, նշվ. աշխ., աղ. XIX, նկ. 2; նկ. 31, 2—3-րդ շերտերի 2-րդ խումբ։

13 Է. Վ. Խանզադյան, Գառնի IV, նկ. 80։

1 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. №№ 6488, 5747, 5616, 7993, 7100, 549, 8737, 10020, 7085։ Տե՛ս նաև Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 300։

2 «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1837, հատ. 1, էջ 21։

3 Մխիթար Գոշ, Առակներ, Երևան, 1951, էջ 61։

4 Կ. Կոստանյան, Նոր ժողովածու, պրակ Բ, Թիֆլիս, 1892, էջ 75։

5 «Բազմավեպ», Վենետիկ, 1850, էջ 140։

քաջքերից շղթայված թագավորի թոչունը)[6]։ Այս թոչունը (իբիս), որ եգիպտացիների կողմից պաշտվում էր, օձահալած է, ոմանք ըստ-նում են, որ նաև օձակեր է, իբր սրա ձվում է գոյանում արքայիկ օձը։

«Պատմություն համասփյուռ ծաղկին» զրույցում վերոհիշյալ հրաշապատումների կողքին նշվում են համասփյուռի աճման վայրերը. «Երթ ի Բասեն և խնդրեա զդեղն, որ կոչի Դարոյնս ուր ջերմուկն է». «Եւ այլք ասացին թէ գտանի ծաղիկն ի Սուրմարի գեղըն որ կոչի Զողկերտ (կամ Ցողկերտ—Ս. Ա.)»։ Ցողկերտը հին ուրարտական ամրոց է եղել, որտեղ գտնվել են սեպագիր արձանագրություններ[7]։

Ղ. Ալիշանը բուսաբանների հավաքած նյութերի հիման վրա համասփյուռը մեխակազգիների ընտանիքի Lychnis ցեղի մի տեսակ է համարում։ Նորագույն հետազոտությունները պարզել են, որ դա նույն ընտանիքի Melandrium ցեղին է պատկանում։ Ռուսերեն дрёма է կոչվում[8], Ռուսներն ունեցել են дрема կոչվող պաշտամունքային շուրջպար։ Ռուդոլֆ Բլաումանիսի «Օրորոցային» երգում дрема-ն մի ոգի է, որ շրջում է տան մոտ ու որոնում իր սպիտակ ծաղիկը։ Ծաղիկը դնում են երեխաների օրորոցներում, բուն բերելու համար.

Возле дома бродит дрема
Где мой беленький цветок?
Баю-баю, бродит дрема
Ищет в сумерках цветок...
Принеси его и тихо
В изголовье положи
Баю-баю, тихо-тихо
в колыбельку положи[9].

Այս վերջին փաստերը ցույց են տալիս, որ համասփյուռ ծաղիկը պաշտամունքի առարկա է եղել նաև այլ ժողովուրդների մոտ։ Պետք է հուսալ, որ հետագա որոնումները հնարավորություն կտան հարստացնելու, ամբողջացնելու և վերականգնելու համասփյուռի վերաբերյալ հին պատկերացումները։

Ս. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

ДВА НОВООТКРЫТЫХ ПАМЯТНИКА МНОГОАПСИДНОЙ КОМПОЗИЦИИ

Среди разнообразных композиций средневековой армянской архитектуры наиболее оригинальный ее отдел составляют многоапсидные памятники. Отличительной особенностью этих сооружений является их близкая к круглой конфигурация, которая сильно централизует подкупольное пространство, что хорошо понимали древние зодчие уже в эпоху раннего христианства.

Преобладающее большинство многоапсидных сооружений были часовнями или гробницами. Наиболее древними памятниками этой композиции являются гробница Кальвентиев (III в.), мавзолей Диоклетиана (305 г.), мавзолей Галерия (306 г.) и храм Нимфей Минерва Медика (IV в.)[1]. Этим сооружениям свойственна монолитность внешнего контура купола с нижней ротондой. В отличие от этих сооружений купол многоапсидных композиций Армении возвышается на барабане, который в диаметре значительно уступает размеру нижней ротонды и тем самым расчленяет композицию внешнего контура на два яруса. Аналогичную композицию имеет церковь св. Виталия в Равенне (547 г.)[2]. Однако членение внешнего контура посредством разномерности купола и основания здесь осуществлено не расширением подкупольного пространства, а наличием кольцевой галереи, охватывающей центр.

В мировой архитектуре последующих веков многоапсидные сооружения большого распространения не находят. В армянской же архитектуре они продолжают строиться до XIII в. и достигают

---

6 Մ. Քաջունի, Բառգիրք արվեստից և գիտության, Վենետիկ, 1891։

7 Մ. Սմբատյան, Տեղագիր Գեղարքունի ժողովրդ գավառի, Վաղարշապատ, 1895, էջ 769 («Մասիս լերան հյուսիսային ստորոտում եղած ընդարձակ ավերակների մեջ, սկսած Փառախոտից (Արհաջ) մինչև Ցոլակերտ (Տաշրուտուն), որոնց միջոցումն է հին քաղաքատեղին Արշակավան»)։

8 «Բույսերի անունների լատին-հայ-ռուս բառարան», Երևան, 1962։

9 Р. Блауманис. Стихи, М., 1971, էջ 20—21։

1 «Всеобщая история архитектуры», т. II, М., 1973, стр. 530—541, 573—574, 658—661.

2 «Всеобщая история архитектуры», т. III, Л.—М., 1966, стр. 73—74.